ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 մարտի 2011 թվականի N 308 - Ն

ԼԱՆԴՇԱՖՏԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻՑ ԲԽՈՂ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2011-2012 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով, 50-րդ և 51-րդ հոդվածներով սահմանված պահանջներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայից (այսուհետ՝ կոնվենցիա) բխող՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման 2011-2012 թվականների միջոցառումների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի հուլիսի 31-ի N 650-Ա որոշման 1-ին կետով ստեղծված հանձնաժողովում (այսուհետ՝ հանձնաժողով) ընդգրկված պետական կառավարման մարմինների ղեկավարներին և առաջարկել տեղական ինքնակառավարման մարմիններին, հասարակական, գիտական ու կրթական կազմակերպությունների ներկայացուցիչներին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա տասներորդ աշխատանքային օրը Հայաստանի Հանրապետության քաղա-

քաշինության նախարարություն ներկայացնել տեղեկատվություն կոնվենցիայի իրագործման ուղղությամբ ձեռնարկված գործողությունների մասին:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարին՝ յուրաքանչյուր կիսամյակին հաջորդող ամսվա երրորդ տասնօրյակում՝

1) ամփոփել սույն որոշման 2-րդ կետում նշված, ինչպես նաև կոնվենցիայից բխող՝ սույն որոշման հավելվածով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման ընթացքի մասին տեղեկատվությունը, քննարկել հանձնաժողովի նիստում և ներառել Հայաստանի Հանրապետությունում կոնվենցիայի իրագործման վերաբերյալ զեկույցներում.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացնել հաշվետվություն սույն կետի 1-ին ենթակետում նշված միջոցառումների կատարման ընթացքի մասին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
մարտի 24-ի N 308 - Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԼԱՆԴՇԱՖՏԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻՑ ԲԽՈՂ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՏԱՐՄԱՆ 2011-2012 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայի հոդվածը	Միջոցառման նպատակը (արդյունքը)	Պատասխանատու մարմինները	Համակատարող մարմինները	Կատարման ժամկետը	Իրականացվող միջոցառման ֆինանսավորման աղբյուրը
1	2	3	4	5	6	7	8
1.	«Հայաստանի Հանրապետության լանդշաֆտի ազգային քաղաքականության իրագործման հիմնադրույթները հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելը	*Հոդված 4. Պարտավորությունների կատարանջատում* *Հոդված 2. Կիրառման ոլորտը* *Հոդված 3. Նպատակները* *Հոդված 5. Ընդհանուր միջոցառումներ. «բ»*	Հայաստանում լանդշաֆտի ազգային քաղաքականության հաստատված հիմնադրույթներ՝ նշված ոլորտում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթների ամրագրմամբ	ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն	ՀՀ վարչապետի 2009 թ. հուլիսի 31-ի N 650-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողով	2011 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե՝ համապատասխան մարմնի (մարմինների) պահպանման ծախսեր
2.	Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման դասընթացներում լանդշաֆտային հիմնախնդիրների ներառման մասին ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի որոշումների ընդունում և պաշտոնի անձնագրե-	*Հոդված 6. Հատուկ միջոցառումներ «Ա. Իրազեկության բարձրացում»*	լանդշաֆտի դերի և նշանակության մասին ՀՀ քաղաքացիական ծառայողների իրազեկվածության և հմտությունների բավարար մակարդակ	ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ (համաձայնությամբ)	ՀՀ վարչապետի 2009 թ. հուլիսի 31-ի N 650-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողով	2011 թ. հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե՝ համապատասխան մարմնի (մարմինների) պահպանման ծախսեր

1	2	3	4	5	6	7	8
	րում համապատասխան փոփոխությունների կատարում						
3.	«Հայաստանի Հանրապետության լանդշաֆտի մրցանակ սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելը	*Հոդված 11. Եվրոպայի խորհրդի Լանդշաֆտի մրցանակը*	սահմանված է լանդշաֆտների պաշտպանության կամ կառավարման կամ պլանավորման հարցերում նշանակալի ավանդի համար Հայաստանի Հանրապետության լանդշաֆտի մրցանակի շնորհման կարգը, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի լանդշաֆտի մրցանակը ներկայացնելու պայմանները՝ համաձայն Եվրոպայի խորհրդի լանդշաֆտի մրցանակով պարգևատրման չափանիշների	ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն	ՀՀ վարչապետի 2009 թ. հուլիսի 31-ի N 650-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողով	2011 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե՝ համապատասխան մարմնի (մարմինների) պահպանման ծախսեր
4.	«Հայաստանի Հանրապետությունում լանդշաֆտների պահպանության, կառավար-ման ու պլանավորման ռազ-մավարությունը և դրանից բխող առաջնահերթ ու միջ-նաժամկետ միջոցառում-ները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշ-ման նախագիծը ՀՀ կառա-վարության քննարկմանը ներկայացնելը	*Հոդված 5. Ընդհանուր միջոցառումներ. «բ» և «դ» կետեր*	լանդշաֆտի ազգային քաղաքականության հիմնադրույթների իրագործումն ապահովող՝ պահպանության, կառավարման և պլանավորման հաստատված ռազմավարություն՝ առաջնահերթ միջոցառումների ամրագրմամբ Միջազգային պայմանագրով սահմանված դրույթների իրագործումն ապահովող իրավական ակտերի մշակման հաստատված ժամանակացույց	ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ գիտության և կրթության նախարարություն	ՀՀ վարչապետի 2009 թ. հուլիսի 31-ի N 650-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողով	2012 թ. մայիսի 2-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե՝ համապատասխան մարմնի (մարմինների) պահպանման ծախսեր

1	2	3	4	5	6	7	8
5.	Հայաստանի Հանրապետության կրթական համակարգում Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայով սահմանված՝ ուսուցմանն ու կրթությանն առնչվող սկզբունքների ներառում	*Հոդված 6. «Բ. Ուսուցում և կրթություն»*	Հայաստանի Հանրապետության կրթության համակարգի վերլուծության արդյունքում՝ կոնվենցիայի տեսանկյունից վերանայված և նոր մշակված կրթական ու առանձին առարկայական ծրագրեր լանդշաֆտի գնահատման և կոնվենցիայով սահմանված այլ գործառույթներով զբաղվելու հմտություններ ունեցող մասնագիտական կադրեր	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ վարչապետի 2009 թ. հուլիսի 31-ի N 650-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողով	2012 թ. և շարունակական	ՀՀ պետական բյուջե՝ համապատասխան մարմնի (մարմինների) պահպանման ծախսեր
6.	«Երևան քաղաքում լանդշաֆտի պահպանման, պլանավորման և զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելը	*Հոդված 6. Գ. Նույնացում (իդենտիֆիկացում) և գնահատում. Դ. Լանդշաֆտի որակի նպատակը*	Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայի սկզբունքներին համապատասխանության տեսանկյունից՝ Երևան քաղաքում առկա իրավիճակի և զարգացման միտումների ուսումնասիրության արդյունքում՝ իրադրությունը բարելավելու ուղղությամբ մշակված միջոցառումներ	ՀՀ քաղաքաշինության նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) «Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա» հասարակական կազմակերպություն (համաձայնությամբ)	ՀՀ վարչապետի 2009 թ. հուլիսի 31-ի N 650-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողով	2012 թ. սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե՝ համապատասխան մարմնի (մարմինների) պահպանման ծախսեր
7.	Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայի իրագործման նպատակով (ներառյալ տարածաշրջանային և միջազգային համագործակցությունը) պետական կառա-վարման և տեղական ինքնակառավարման համակարգերի ինստիտուցիոնալ	*Հոդված 5. Ընդհանուր միջոցառումներ «գ» Հոդված 6. Հատուկ միջոցառումներ Գ. «բ» Հոդված 7. Միջազգային քաղաքականություն և ծրագրեր Հոդված 8. Փոխադարձ աջակցության և տեղե-*	լանդշաֆտի կառավարման, պլանավորման և պահպանման ռազմավարության իրագործման համար անհրաժեշտ կարողություններ ունեցող ինստիտուցիոնալ կառույցներ հիմնված են անդրսահմանային համագործակցության ցանցեր	ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ արտաքին գործերի նախարարություն.	ՀՀ վարչապետի 2009 թ. հուլիսի 31-ի N 650-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողով	2012 թ. և շարունակական	միջազգային ֆինանսական օժանդակություն ՀՀ պետական բյուջե՝ համապատասխան մարմնի (մարմինների)

1	2	3	4	5	6	7	8
	կարողությունների ամրապնդմանն ուղղված ծրագրի մշակում և ՀՀ կառավարության համապատասխան արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելը	*կարվության փոխանակում* *Հոդված 9. Անդրսահմանային լանդշաֆտներ*	սահմանված են լանդշաֆտային քաղաքականության իրականացմանը հանրության մասնակցության ընթացակարգեր				պահպանման ծախսեր
8.	Հայաստանի Հանրապետությունում Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայի իրականացման վերաբերյալ պարբերական զեկույցների նախապատրաստում	*Հոդված 10. Կոնվենցիայի իրականացման նկատմամբ հսկողությունը*	Հայաստանում Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիան իրագործելու վերաբերյալ պարբերաբար կազմվող զեկույցներ՝ շահագրգիռ կազմակերպություններին (այդ թվում՝ միջազգային) փոխանցելու և հանրությանն իրազեկելու համար	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	ՀՀ վարչապետի 2009 թ. հուլիսի 31-ի N 650-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողով	2011 թ. և շարունակական	ՀՀ պետական բյուջե՝ համապատասխան մարմնի (մարմինների) պահպանման ծախսեր